

Անուր մ'որ չարի տի գաս, քու չարե՛րը դառնայ բարի:

\*\*\*\*

Պիւլպիւլը պախճան իջեր, վարդենուն թըփիկն է թառեր.  
Անուշ մենեմշին հոտուն՝ ողուորիս քընիկն է տարեր:

\*\*\*\*

Պիւլպիւլը վարդին սիրուն՝ չի լընիր գիշերն ալ ի քուն.  
Ո՛չ գիշերը քուն կու 'լլի, ո՛չ ցորեկն՝ միժվի իրիկուն.  
Պառկէ 'ւ անուշ քուն եղի, մինչունկ գայ լուսն առաւօտուն.  
Լուսնայ բարի լուսը գայ, պիւլպիւլըս ա՛լ կ'ելլէ քընուն,  
Պիւլպիւլս ա՛լ կ'ելլէ քընուն, կեսն է քուն, կեսըն է արթուն:

\*\*\*\*

Օրօր կանչեմ իմանաս, պառկիս ու անուշ քընանաս.  
Քընանաս ու մեծանաս, մեծանաս ու մեծ մի լընիս.  
Բորորի ու գեղ մի լընիս.  
Ան գեղն ուր մեծ չիկենայ, ան գեղին մեծը դուն լընիս.  
Դուն լընիս անտառ մորուն, զարնես քօքիկըդ խորուն,  
Քօքիկըդ խորուն զարնես, ծառըդ շուք անէ ճեղերուն:  
Ծառ շըքեր, վըրայ եկէք, շուք արեք մեր պիւլպիւլներուն:

### ԱԿՆԱՅ ԶԱՐՍԱՆԵԿԱՆ ԵՐԳԵՐ

\*\*\*\*

Այն իմ հարըստի դըստրիկ, ծոցդ եգի, ծառդ արմաւենի.  
Արմաւն քու ծառդ կու լընի, պիւլպիւլը քու ճեղդ կու թառի.  
Քու ծառն ու ճեղդդ ոսկի, քու տերե՛ւը վարդ կու մանի.  
Ես քո ծոցուն տեր պիտ'ի, ճըղերուդ արմաւ քաղէի:

\*\*\*\*

Զարսնո՛ւկ, քէ խըրատ մի տամ, թը տեօվլէթ ունիս նը մըռէ.  
Չըտ ականջըդ իս արէ, զինչ ըսիմ նը ան արէ՛.  
Որ գան ու հազար ըսին, հազրէն մէկ խօսքունկ մի խօսէ՛,  
Ան ալ չիգիտեմ ըսէ՛, դուն հազար չարէ խալիսէ:

\*\*\*\*

Մեր տունն Աստուծոյ շիւսած, Աստուծոյ շիւսած ու օրինած,